Ռուզաննա ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2018 թ.-ից աշխատում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնում: 2018-2020 թթ. սովորել է Texas A&M համալսարանի Ագրոբիզնեսի մագիստրատուրայում: Վերապատրաստվել է աշխարհի տարբեր երկրների համալսարաններում:

https://orcid.org/0000-0003-2226-6435

ՀՀ ՏՀՏ ՈԼՈՐՏԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՀԱՂԹԱՐՇԱՎԸ

DOI: 10.52174/2579-2989_2024.1-46

Հիմնաբառեր. *ՏՀՏ, արտահանում, ծառայություններ, ապրանքներ, աճ*

Հոդվածում վերլուծվել են ՀՀ ՏՀՏ ոլորտի արտահանման աճի տեմպը, կառուցվածքը, ընդհանուր արտահանման մեջ տեսակարար կշիռը՝ ինչպես ապրանքների, այնպես էլ ծառայությունների վերաբերյալ: ՏՀՏ ծառայությունների արտահանման աճն ուսումնասիրվող ժամանակահատվածում գերազանցել է ՀՀ ընդհանուր արտահանման աճի տեմպը: ՏՀՏ ոլորտի արտահանման մեջ առյուծի բաժինը պատկանում է ծառայություններին, իսկ դրանց մեջ՝ համակարգչային ծառայություններին: Ընդ որում, վերջին 10 տարում ՏՀՏ ծառայությունների արտահանման մեջ տեղի է ունեցել կառուցվածքային տեղաշարժ. հեռահաղորդակցության շուրջ 1/3 մասնաբաժինն անընդհատ նվազելով՝ 2022 թ.-ին հասել է 1%-ի, որի փոխարեն՝ էլ ավելի մեծացել է համակարգչային ծառայությունների մասնաբաժինը:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները (ՏՀՏ) դարձել են Հայաստանի տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժը: 2000 թ. ՏՏ-ն կառավարության կողմից հայտարարվել է գերակա ճյուղ, որից հետո մշակվել է ոլորտի ռազմավարությունը և ներդրվել զարգացման հայեցակարգը (2001 թ.), ապա ստեղծվել են ոլորտի զարգացմանը նպաստող մարմիններ՝ Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը (ԻՏՁՄ, 2000 թ.), ՀՀ վարչապետի վերահսկողության ներքո գործող Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման խորհուրդը (ՏՏԶԽ, 2001 թ.) և Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը (ՁԻՀ, 2002 թ.): 2014 թ. ընդունվել է «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին»



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

ՏՀՏ ծառայությունների արտահանումը և մասնաբաժինն ընդհանուր արտահանման մեջ, մլն ԱՄՆ դոլար, %[1]

ՀՀ օրենքը, որով ՏՏ ոլորտի սկսնակ ընկերություններին, որոնց աշխատակիցների թիվը չի գերազանցում 30-ը, հավաստագիր ստանալու պահից սկզբնական շրջանում 5 տարի ժամկետով, իսկ այնուհետև արդեն մինչև 2023 թ. դեկտեմբերի 31-ը տրվել է հարկային արտոնություն՝ շահութահարկի 0% և եկամտային հարկի 10% դրույքաչափերի կիրառմամբ[2]: Հատկապես այս օրենքի ընդունումից հետո, նոր ստեղծվող ընկերությունների թվի առումով, ոլորտում էական աշխուժացում նկատվեց:

Հայաստանի ՏՀՏ ոլորտը մեծապես ուղղված է արտահանմանը: ՏՀՏ ոլորտի արտահանումը ներառում է ինչպես ՏՀՏ ծառայությունները, այնպես էլ ՏՀՏ ապրանքները: ՏՀՏ ծառայությունների մեջ մտնում են հեռահաղորդակցությունը, համակարգչային և տեղեկատվական ծառայությունները: 2022 թ. ՏՀՏ ծառայությունների հանրագումարային արտահանումը կազմել է 711.4 մլն ԱՄՆ դոլար, որն ՀՀ ընդհանուր արտահանման 7.1%-ն է (գծապատկեր 1):

Դիտարկված ժամանակահատվածում ՏՀՏ ծառայությունների արտահանման մասնաբաժինն ամենամեծը եղել է 2020 թ.-ին՝ կազմելով ապրանքների և ծառայությունների ընդհանուր արտահանման շուրջ 9%-ը: 2020 թ.-ին ՏՀՏ ծառայությունների մասնաբաժնի շեշտակի աճը պայմանավորված է եղել համավարակի պայմաններում այլ ծառայությունների, օրինակ՝ ճամփորդությունների կտրուկ անկմամբ: ՏՀՏ ծառայությունների արտահանման ծավալով ամենամեծ արժեքը գրանցվել է 2022 թ.-ին՝ կազմելով 711 մլն ԱՄՆ դոլար, որը թեև կրկնակի ավելի է 2020 թ.-ի ցուցանիշից, սակայն ընդհանուր արտահանման մեջ մասնաբաժինը նվազել է՝ պայմանավորված 2022 թ.-ին ապրանքների և ծառայությունների ընդհանուր արտահանման ավելի մեծ աճի տեմպով: 2022 թ.-ին ՏՀՏ ծառայությունների արտահանման աննախադեպ աճն առավելապես կապված է ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով Ռուսաստանից ոլորտի մասնագետների Հայաստան տեղափոխման հետ: Արդյունքում 2022 թ.-ին ՀՀ ՏՀՏ ծառայությունների արտահանումը կազմել է համաշխարհային ՏՀՏ ծառայությունների արտահանման 0.07%-ը: ՏՀՏ ծառայությունների արտահանումը 10 տարվա ընթացքում աճել է ավելի քան 6 անգամ: Գծապատկեր 2-ում կարելի է նկա-

[1] Աղբյուրը՝ UN COMTRADE, WB, https://comtradeplus.un.org/, https://data.worldbank.org/indicator/BX.GSR.GNFS.CD?locations=AM

[2] «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, https://www.arlis.am/documentview.aspx?docid=130329

ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

ՏՀՏ արտահանման և ընդհանուր արտահանման աճի տեմպերը, %[3]

տել, որ բացառությամբ 2017, 2019 և 2021-2022 թվականների, մնացած տարիներին ՏՀՏ արտահանման աճը գերազանցել է ՀՀ ընդհանուր արտահանման աճը: 2013-2022 թթ. ՏՀՏ ծառայությունների արտահանման տարեկան համակցված աճը (CAGR) կազմել է շուրջ 20%, այն դեպքում, երբ ընդհանուր արտահանման տարեկան-համակցված աճը նույն ժամանակահատվածում ընդամենը 12% էր: Եթե բացառենք ռուս-ուկրաինական պատերազմի արդյունքում 2022 թ. ՀՀ արտահանման կտրուկ աճը, ապա 2013-2021 թթ. ՏՀՏ ծառայությունների և ընդհանուր արտահանման համակցված տարեկան աճերը համապատասխանաբար՝ 15% և 5% են:

ՏՀՏ ծառայությունների արտահանման մեջ առյուծի բաժինը պատկանում է համակարգչային ծառայություններին (գծապատկեր 3): Եթե մինչև 2015 թ.-ը հեռահաղորդակցության մասնաբաժինը ՏՀՏ ծառայությունների արտահանման մեջ 30%-ի, տեղեկատվական ծառայություններինը՝ 6%-ի, իսկ համակարգչային ծառայություններինը՝ 60%-ի շրջանակում էր, ապա վերջին տարիներին պատկերն էականորեն փոխվել է: Մասնավորապես՝ թե՛ բացարձակ արժեքով, թե՛ տեսակարար



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

ՀՀ ՏՀՏ ծառայությունների արտահանման կառուցվածքը, մլն ԱՄՆ դոլար[4]

[3] Աղբյուրը՝ UN COMTRADE, WB, https://comtradeplus.un.org/, https://data.worldbank.org/indicator/BX.GSR.GNFS.CD?locations=AM

[4] Աղբյուրը՝ UN COMTRADE, https://comtradeplus.un.org/



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

ՏՀՏ ապրանքախմբերի արտահանումը ՀՀ-ից, 2013-2021 թթ., մլն ԱՄՆ դոլար

կշռով զգալի չափով նվազել է հեռահաղորդակցության ենթաոլորտի արտահանումը՝ 2022 թ.-ին կազմելով ՏՀՏ ծառայությունների արտահանման ընդամենը 1%-ը: Կարևոր է ընդգծել, որ այս միտումը բնորոշ է ամբողջ աշխարհին՝ պայմանավորված OTT (Over the top) ծառայությունների (WhatsApp, Viber, Mes-senger, Signal և այլն) ընդլայնմամբ, որի արդյունքում բջջային, լարային հեռախոսակապերը փոխարինվում են վերոնշյալ՝ ավելի էժան այլընտրանքներով, որոնք անհամեմատ ցածր մարժա ունեն: Ի տարբերություն հեռահաղորդակցությանը, համակարգչային ծառայությունների արտահանումը թե՛ բացարձակ արժեքով, թե՛ մասնաբաժնով էականորեն աճում է՝ 2022 թ.-ին կազմելով ՏՀՏ ծառայությունների արտահանման 94%-ը: Տեղեկատվական ծառայությունները թեև 10 տարվա ընթացքում աճել են ավելի քան 5 անգամ, սակայն դրանց մասնաբաժինը որոշակիորեն կրճատվել է՝ կազմելով շուրջ 5%:

Անդրադառնալով ՏՀՏ ապրանքների արտահանմանը, պետք է նշել, որ դա, ի տարբերություն ՏՀՏ ծառայությունների արտահանման, արժեքով բավական փոքր է՝ բացառությամբ 2022 թ.-ի: Այսպես՝ 2013-2021 թթ. ՏՀՏ ապրանքների արտահանումը կազմել է 2.3-15 մլն ԱՄՆ դոլար, որը թեև 9 տարում աճել է շուրջ 7 անգամ, սակայն ՀՀ արտահանման մեջ ունեցել է աննշան մասնաբաժին՝ կազմելով 2021 թ. ՀՀ-ից ապրանքների արտահանման ընդամենը 0.5%-ը: 2013-2017 թթ.-ին ՏՀՏ ապրանքների արտահանման մեջ առավել մեծ է եղել կապի սարքավորումներ (ICT 02 Communication Equipment), 2018-2019 թթ.-ին՝ համակարգիչներ և ծայրամասային սարքավորումներ (ICT 001 Computers and Peripheral Equipment) ապրանքախմբերի մասնաբաժինը, իսկ 2020-2021 թթ.-ին ավելի բարձր է եղել սպառողական էլեկտրոնային սարքավորումների (ICT 03 Consumer Electronic Equipment) արտահանման տեսակարար կշիռը (գծապատկեր 4):

ՀՀ-ից ՏՀՏ ապրանքների արտահանման ոչ տեղական ծագման մասին է վկայում նաև տարբեր տարիների առավել մեծ մասնաբաժին ունեցող 10 ապրանքախմբերի ցանկի համեմատությունը: Այսպես, 2013 թ.-ին ՀՀ-ից արտահանված առավել մեծ արժեքով ՏՀՏ ապրանքախմբերից միայն երկուսն է տեղ գտել 2021 թ.-ի առաջատար տասնյակում, իսկ 2021 թ.-ին արտահանված առաջատար տասնյակից միայն 3 ապրանքախումբ է տեղ գտել 2022 թ.-ի ՏՀՏ ապրանքների արտահանման տասնյակում:

2022 թ.-ին HS 6 նիշ դասակարգմամբ ընդամենը 3 ապրանքախմբի բաժին է ընկել ՏՀՏ ապրանքների արտահանման 62%-ը, 5 ապրանքախմբի՝ 73%-ը, 10 ապրանքախմբի՝ 87%-ը: 2022 թ.-ին ՀՀ-ից արտահանված ՏՀՏ ապրանքների առավել մեծ մասնաբաժին ունեցող ապրանքախմբերը ներկայացված են աղյուսակ 1-ում:

Այնուհետև ամփոփելով կարող ենք

ԱՂՅՈՒՍԱԿ 1

2022 թ.-ին ՀՀ-ից արտահանված ամենամեծ արժեք ունեցող ՏՀՏ ապրանքախմբերը

HS կոդ	Ապրանքախմբի անվանումը	Արժեքը
852872	Հեռուստատեսության ընդունիչ սարքեր,՝ ռադիոհաղորդիչ ընդունիչներ կամ ձայնային կամ տեսանկարահանող կամ վերարտադրող սարքեր՝ ներառելով գունավոր տեսաէկրան	79.7346
847130	Ավտոմատ տվյալների մշակման մեքենաներ՝ շարժական, ոչ ավելի, քան 10 կգ քաշով՝ բաղկացած առնվազն կենտրոնական մշակման միավորից, ստեղնաշարից և էկրանից	54.4511
851762	Կապի սարքեր (բացառությամբ հեռախոսային սարքերի կամ բազային կայանների)՝ ձայնի, պատկերների կամ այլ տվյալների ընդունման, փոխակերպման և փոխանցման կամ վերականգնման համար, ներառյալ անջատիչ և երթուղային ապարատները	33.8043
853400	Սխեմաներ	14.9728
851830	Ականջակալներ և ականջակալներ՝ խոսափողի հետ համակցված կամ չհամակցված, մեկ կամ ավելի բարձրախոսներից բաղկացած սարքեր	13.2322
847170	Տվյալների մեքենայական մշակման սարքեր, պահեստավորման միավորներ	11.4581

նշել, որ ՀՀ ՏՀՏ ոլորտի արտահանման աճի տեմպը Հայաստանին դիրքավորում է որպես Կովկասի տեխնոլոգիական առաջատար: ՀՀ ՏՀՏ արտահանման առյուծի բաժինը պատկանում է ՏՀՏ ծառայություններին, իսկ ՏՀՏ ապրանքների արտահանումն անհամեմատ ավելի համեստ է, և վերջինիս շարժընթացում դժվար է գտնել որեւէ օրինաչափություն՝ հաշվի առնելով վերաարտահանման մեծ չափերը:

Դիտարկվող ժամանակահատվածում աճել է ոչ միայն արտահանման ծավալը, այլև ՏՀՏ ապրանքների արտահանման տեսականին: Եթե 2013 թ.-ին արտահանվում էր շուրջ 45 տեսակի ՏՀՏ ապրանք, ապա այժմ՝ մոտ 70: Կարևոր է ընդգծել, որ ՀՀ-ից ՏՀՏ ապրանքների արտահանումը դեռևս չի վկայում ՀՀ-ում դրանց արտադրության մասին: Նշվածը հատկապես առնչվում է 2022 թ.-ին, երբ արտահանման ծավալը, նախորդ տարվա 15 մլն ԱՄՆ դոլարից աննախադեպ աճելով, հասել է



ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

ՏՀՏ ապրանքախմբերի արտահանումը ՀՀ-ից, 2022 թ., մլն ԱՄՆ դոլար[5]

[5] Հաշվարկները կատարվել են ըստ UN COMTRADE տվյալների՝ որպես հիմք ընդունելով ICT goods categories and composition (HS 2017) UNCTADSTAT-ի մեթոդաբանությունը, https://comtradeplus.un.org/, https://unctadstat.unctad.org/EN/Classifications/DimHS2017Products_Ict_Hierarchy.pdf

270 մլն ԱՄՆ դոլարի (գծապատկեր 5): Ակնհայտ է, որ 2022 թ.-ին ՏՀՏ ապրանքների արտահանման գերակշիռ մասը վերաբերում է վերաարտահանմանը:

Նշված ապրանքախմբերի արտահանման 90-99%-ը բաժին է ընկել Ռուսաստանի Դաշնությանը, աննշան քանակով արտահանվել է նաև դեպի Իրան և այլ երկրներ:

Ամփոփելով կարող ենք ասել, որ ՀՀ ՏՀՏ ոլորտի արտահանման աճի տեմպը Հայաստանին դիրքավորում է որպես Կովկասի տեխնոլոգիական առաջատար: ՀՀ ՏՀՏ արտահանման առյուծի բաժինը պատկանում է ՏՀՏ ծառայություններին, իսկ համապատասխան ապրանքների արտահանումն անհամեմատ ավելի համեստ է, և վերջինիս շարժընթացում դժվար է գտնել որևէ օրինաչափություն՝ հաշվի առնելով վերաարտահանման մեծ չափերը:

Միաժամանակ, հարկ է նշել, որ երկար ժամանակ ոլորտի աճը խթանել է գործող հարկային արտոնությունը, որը դադարել է 2023 թ. դեկտեմբերի 31-ին, իսկ վերջին 2 տարում աճին էական նպաստում է ունեցել Ռուսաստանից ոլորտի մասնագետների Հայաստան տեղափոխվելը: Ուստի 2024 թ.-ին հարկային արտոնության բացակայության և շղթայական ռեակցիայով ռելոկանտների հավանական տեղափոխման դեպքում հնարավոր է՝ նկատվի աճի որոշակի դանդաղում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, https://www.arlis.am/documentview.aspx?docid=130329
2. UN COMTRADE, https://comtradeplus.un.org/
3. WB,https://data.worldbank.org/indicator/BX.GSR.GNFS.CD?locations=AM
4. UNCTADSTAT, ICT goods categories and composition (HS 2017) https://unctadstat.unctad.org/EN/Classifications/DimHS2017Products_Ict_Hierarchy.pdf

Рузанна ТАДЕВОСЯН
Младший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ

АРМЕНИЯ И МИР

ЭКСПОРТНЫЙ ТРИУМФ СЕКТОРА ИКТ АРМЕНИИ

В статье анализируются темпы роста сектора ИКТ в Республике Армения, его структура и доля в общем объеме экспорта как товаров, так и услуг. Рост экспорта услуг ИКТ за исследуемый период превысил темпы роста общего экспорта РА. Львиная доля экспорта сектора ИКТ приходится на услуги, в том числе на компьютерные услуги. Более того, за последние 10 лет произошел структурный сдвиг в экспорте услуг ИКТ, доля телекоммуникаций снизилась примерно с 1/3 до 1% в 2022 году, а вместо этого доля компьютерных услуг еще больше увеличилась.

Ключевые слова: *ИКТ, экспорт, услуги, товары, рост*

Ruzanna TADEVOSYAN
Junior Researcher at «Amberd» Research Center, ASUE

ARMENIA AND THE WORLD

EXPORT TRIUMPH OF ARMENIA'S ICT SECTOR

The paper analyzes the rate of growth of the ICT sector in the Republic of Armenia, its structure and share in total exports, both in terms of goods and services. The export growth of ICT services during the studied period exceeded the growth rate of the total export of the RA. The lion's share of ICT sector exports belongs to services, and among them, computer services. Moreover, in the last 10 years, there has been a structural shift in the export of ICT services, the share of telecommunications has decreased from around one-third to one percent in 2022, while the share of computer services has increased even further.

Keywords: *ICT, export, services, goods, growth*